Արձանագրություն N 4
ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/5 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 սեպտեմբերի 2019թ
ժամը 14:40

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Մ. Միքայելյանը, Գ.Ավետիսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 Հրավերով սահմանված ժամկետում «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն և «ՄարտՇին» ՍՊԸ-ն հանձնաժողովին են ներկայացրել շտկված փաստաթղթերը:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված շտկված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ժամկետում «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի և «ՄարտՇին» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ.

ա/ <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

բ/ մասնակիցների <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Ներկայացված գնային առաջարկներիի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ –ին:

բ/ 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել՝ «ՄարտՇին» ՍՊԸ -ին:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Մուրադյան)

4. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Մ. Միքաելյան

_____ Գ.Ավետիսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան